ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մայիսի 13-ի, ժամը 14:00-ի նիստի

1. **Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների ձևավորման մասին:**
   Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

2. **Կառավարման ֆակուլտետի դեկանի հաշվետվության մասին:**
   Զեկուցող՝ կառավարման ֆակուլտետի դեկան **Մ.Է.Մովսիսյան**:

3. **Պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին:**
   Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

   1) **Արարատ Դվինի Գոմցյան՝** միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր:

   Հայցորդի գործը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի մայիսի 11-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 9):

4. **Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:**
   Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ **Ա.Հ.Սարգսյան**:

   1) **Հրայր Մաքսիմի Մուրադյան՝** ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու:

   Հայցորդի գործը քննարկվել և երաշխավորվել է գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի մայիսի 11-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 9):

5. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պատվավոր կոչումների շնորհման կանոնակարգը հաստատելու** և գիտական խորհրդի 2018 թվականի հունիսի 29-ի նիստում (արձանագրություն N 8) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պատվավոր կոչումների շնորհման կանոնակարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին:
   Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

6. **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջազգային շարժունության կարգը հաստատելու** և գիտական խորհրդի 2018 թվականի հոկտեմբերի 31-ի նիստում (արձանագրություն N 4) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում «էրազմուս+» ծրագրի շրջանակներում շարժունության իրականացման կարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ ռեկտոր **Դ.Ռ.Գալոյան**:

7. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ավարտական աշխատանքի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային պաշտպանության կանոնակարգը հաստատելու** և գիտական խորհրդի 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումները» և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գրախոսման կարգը» ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

8. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մագիստրոսական թեզի կատարման, պաշտպանության ներկայացման և հրապարակային պաշտպանության կանոնակարգը հաստատելու** և գիտական խորհրդի 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումները» ուժը կորցրած ճանաչելու մասին:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան**:

9. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգը հաստատելու մասին:**

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա.Վ.Գրիգորյան:**

10. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն առաջարկվող **«ՀՀ բիզնես միջավայրում առկա մարտահրավերները թվային տնտեսությանն անցման պայմաններում» խորագրով հետազոտական թեման հաստատելու** մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան:**

Հետազոտական թեման քննարկվել և հաստատվել է գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2022 թվականի մայիսի 12-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 3):

11. Ընթացիկ հարցեր:

1) Ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ատենախոսությունների թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2022 թվականի մայիսի 12-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 3):

2) Հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր **Արարատ Մխիթարի Հակոբյանի «Հայոց պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» ուսումնական ձեռնարկի** հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Ուսումնական ձեռնարկը, 150 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2022 թվականի ապրիլի 22-ի, ժամը 11:00-ի նիստում (արձանագրություն N 10): Այն նախատեսվում է հրատարակել հրատարակչական պլանով՝ «Տնտեսագետ» հրատարակչությունում:

3) Ֆինանսական հաշվառման ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր **Արմեն Աշմատի Հակոբյանի «Տրանսֆերային գնագոյացում» մենագրության** հրատարակությունը երաշխավորելու մասին:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Մենագրությունը, 150 օրինակ տպաքանակով, հրատարակության է երաշխավորվել գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի՝ 2022 թվականի ապրիլի 22-ի, ժամը 11:00-ի նիստում (արձանագրություն N 10): Այն նախատեսվում է հրատարակել հեղինակի միջոցներով:

Գիտական քարտուղար՝ **Ն.Հ.Դարբինյան**

2022 թ. մայիսի 11
Երևան